Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ-ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԷՍՍԱՖԷ (XV—XVIII ԴԴ.)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Ֆաթիհի կողմից Կ. Պոլիսը գրավելու ժամանակից ի վեր (1453) արհեստավորությունը կազմել է նրա բնակչության, այդ թվում և հայ համայնքի, ամենամարդաշատ տարրը։ 1460—1470-ական թթ. էնկյուրիից, Ամասիայից, Սրսպիզոնից, Կարամանից, Կաֆայից (Ղրիմ), Էգեյան կղզիներից և այլ շրջաններից մայրաքաղաքը վերաբնակեցնելու նպատակով այնտեղ քշված բազմությունների մեջ զգալի քանակ էին կազմում հայ արհեստավորները։ Արհեստավորներին գերեվարելու կամ Կ. Պոլիս գաղթեցնելու երևույթին ենք հանդիպում 1514, 1534, 1548, 1578 թթ., մասամբ՝ XVII դարում[1]։ Կ. Պոլիսը գրավելուց հետո թուրքերը գավառներից տեղահանեցին և նրա մերձակայքում բնակեցրեցին 30 հազարի չափ գյուղացիների՝ քաղաքը գյուղատնտեսական պարենով ապահովելու նպատակով[2]։ Հայտնի է, որ Բերային և Խասգյուղին կից տարածքներում դեռևս XVI դարում հայերը զբաղվում էին հողագործությամբ[3]։

Օսմանյան տիրակալները նախընտրում էին գաղթեցնել հույն, հրեա, հայ, մահմեդական բնակչության այն խավերին, որոնք ոչ միայն արհեստավոր և առևտրական էին, այլև բանվորներ, շինարարներ, հողագործներ և այլն։ Բռնագաղթերը, ի դեպ, թուրքերին հնարավորություն էին տալիս կողոպտելու ժողովրդի ամենալայն խավերին, տիրանալու նրանց ունեցվածքին և կարողությանը։

Այն, որ Կ. Պոլսի առաջին հայ վերաբնակիչների հիմնական մասը կազմել են արհեստավորները, վկայում են նաև հին տապանաքարերը։ Պալըքլըի գերեզմանատնից հայտնի են թերզի (դերձակ) Մկրտիչը (1530—1540 թթ.), մահտեսի յազրնի (գրագիր) Սողոմեն (1551 թ.)[4]։

Հայ գաղթականները, իբրև միևնույն տեղավայրերի հավաք խմբեր կամ բազմություններ, հիմնականում բնակեցվում էին մայրաքաղաքի միևնույն շրջաններում։ Այսպես, 1475 թ. Ղրիմը նվաճելուց հետո Կ. Պոլիս տեղափոխված հայերը հաստատվեցին Սալամաթոմրուկ թաղում (քաֆացոց կամ քաղաքացոց թաղ)՝ Զարիափան Ս. Աստվածածին եկեղեցիով, Կարամանի հայերը բնակվում էին Սամաթիա թաղում (1479-ից)՝ Սուլուամանասթրրի Ս. Գեվորգ եկեղեցիով[5]։ Հայրենակցական խմբերով և համատեղ բնակվում էին արհեստավորները, Խասգյուղում՝ ակնցի քիրամիտագործները (կղմինդրագործներ), Այվանսարա թաղում՝ խեցեգործները, Թոփգաբուում՝ գաթրրճիները

---

1 Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները։ Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի. Կ. Պոլիս, 1901, էջ 83։ Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Պատմություն Եվդոկիո հայոց. Կահիրե, 1952, էջ 334։ Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում. մաս 2-րդ, Կ. Պոլիս, 1914, էջ 2186։

2 L. Kinross. The Ottoman centuries. London, 1977, p. 117.

3 Գ. Հ ն ա ս ե ր. Հայ գրականությունը տապանաքարերու վրա.—«Բազմավեպ», 1928, № 7—8, էջ 211։

4 Գ. Հ ն ա ս ե ր. Հայ վաճառականներ և արհեստավորներ Կ. Պոլսո մեջ.—«Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1928, № 37, էջ 1161։

5 Դ. Խ ա չ կ ո ն ց. Կ. Պոլսո հայ գաղութին ծագումը։ Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի. Կ. Պոլիս, 1902, էջ 193։

(ջորեվաճառներ)[6]։ XVII—XVIII դդ. պոլսաբնակ ակնցիների մեջ տարածված զբաղմունքներ էին նաև հացագործությունն ու սեղանավորությունը, տիվրիկցիների մեջ՝ ոսկերչությունը, սեբաստացիների մեջ՝ դերձակությունը, կեսարացիների մեջ՝ շինարարական արհեստներն ու առևտուրը, դերձակությունը, կամախեցիների մեջ՝ հացագործությունը և այլն[7]։

Միաժամանակ առանց չափազանցության, վերածվելով հայության մի ամփոփ մանրակերտի, Կ. Պոլսի հայ արհեստավորական ու առևտրական խավերը իրենց թվաքանակի համեմատությամբ ներկայացնում էին զբաղմունքների վիթխարի բազմազանություն։ Սոցիալական կացությամբ և կարգավիճակով նրանք, ինչպես և կայսրության մյուս հպատակ ժողովուրդների նույնական խավերը, մտնում էին այսպես կոչված էսնաֆի՝ արհեստավորա-առևտրական կորպորատիվ կազմակերպությունների մեջ։ Էսնաֆն ընդգրկում էր քաղաքային և գյուղական շրջանների բոլոր նշված խավերին, այլ կերպ՝ հարկատու ամբողջ բնակչությանը, բացի հողագործ ռայաներից։ Էսնաֆի մեջ էին մտնում և առանձին արհեստակցական խմբավորումներ էին կազմում նաև արվեստի ու մտավոր աշխատանքի մարդիկ՝ ճարտարապետները, նկարիչները, դպիրները, գրագիրները, բժիշկները։ Միանգամայն իրական է թվում այն տվյալը, ըստ որի՝ սուլթան Իբրահիմի ժամանակ, 1645 թ., Կոստանդնուպոլսում բնակվում էին 200 հազար քրիստոնյաներ՝ հույներ, հայեր, սլավոններ և այլն[8]։ Նկատենք նաև, որ 1453 թ. ի վեր քաղաքում ամենաբազմամարդ համայնքը թուրքերից և հույներից հետո հայերն էին[9]։ XVII դարի կեսին այստեղ գործում էին ավելի քան 23 հազար արհեստանոցներ, որտեղ ներգրավված էին շուրջ 80 հազարի չափ աշխատողներ[10]։ Միայն Կոստանդնուպոլսում XVI—XVII դդ. կային 150 համքարություններ՝ չհաշված երկրորդականները[11]։

Սուլթան Մուրադ III-ի (1574—1595) որդու թլպատության առթիվ կազմակերպված «դոնանման» հիշելիս Գ. Այվազովսկին թվարկում է շատ արհեստներ, «եւ այլք ընդ ամենայն հարիւր և քառասնեկին դասք արուեստագիտաց»[12]։ Համեմատության համար նշենք, որ 1670 թ. Կահիրեում գործում էին 252 արհեստագործական կորպորացիաներ, Դամասկոսում՝ 136-ը[13]։

XVI—XVII դդ. կայսրությունում և մանավանդ մայրաքաղաքում հայտնի էին արհեստների մասնագիտական խորացման կամ ճյուղավորման, նույնիսկ՝ բնույթով ու արտադրանքի նպատակով միմյանց շատ մոտ արհեստների անջատ գործառելու երևույթները։ Ե. Քյոմյուրճյանը 1657 թ. մի «դոնանմայի» առթիվ հիշատակում է տասնյակ արհեստներ՝ հացագործներ, «որք էին յազգէն հայոց», մսածախներ, պաշնիներ (ոչխարի գլուխ եփողներ), ֆաշաճիներ։

---

6 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ. Երուսաղէմ, 1915, էջ 190։ Ե. Քէօմիւրճեան. Պատմութիւն Ստամպօլոյ. Բ, Վիեննա, 1913, էջ 419 (Վ. Թորգոմյանի ծանոթագրությունները)։

7 Հ. Գ. Մրմրյան. Թուրքահայոց հին վաճառականություն և վաճառականք. Կ. Պոլիս, 1901, էջ 18։ Բ. Կյուլեսերյան. Կոլոտ Հովհաննես պատրիարք. Վիեննա, 1904, էջ 122։

8 Գ. Այվազովսկի. Պատմութիւն օսմանեան պետութեան. հ. Ա, Վենետիկ, 1841, էջ 613։

9 Ю. А. Петросян. Древний город на берегах Босфора. М., 1986, с. 138—139.

10 Ю. А. Петросян. Османская империя. М., 1990, с. 86.

11 H. Inalcik. The Ottoman Empire.1300—1600. New York—Washington. 1973, p. 159.

12 Գ. Այվազովսկի. նշվ. աշխ., էջ 450։ «Դոնանմա» (թուրք.) նշանակում է տոնահանդես։ Կատարվում էր սուլթանի զավակների ծննդյան, թլպատման, ամուսնության և կամ պետության համար կարևորագույն իրադարձությունների առթիվ։ Շքերթին մասնակցում էին նաև էսնաֆությունները իրենց դրոշակներով, խորհրդանշաններով, դեսպակներով և այլն։

13 Н. А. Иванов. Арабо-османский цех в XVI—XVII вв. —В кн.: Османская империя. Государственная власть и социально-политическая структура. М., 1990, с. 195—196.

(անասունի ազդրը եփողներ)՝ երկուսն էլ մսագործության տարատեսակներ, պոզասիներ (թաշկինակ կարող-վաճառողներ), ֆյոմլեֆիներ (շապիկ կարող-վաճառողներ), դավուխներ, թաֆյաներ (գլխարկի տարբեր տեսակների արհեստավորներ), փարաճիներ և պոզմաճիներ (տարբեր տեսակի կոշիկներ նորոգողներ), դավաֆիներ (մուճակ կարող-վաճառողներ) և «ընդ սոսա էին կարողքն մուճակից, զոր սոքա ուրոյն են ի դավաֆից», ընդգծում է Ե. Էյոմյուրճյանը՝ առանձնացնելով այս գրեթե նույն արհեստները[14]։ Նա հիշատակում է մայրաքաղաքում գործառող 53 տեսակի արհեստներ, որոնց կերակրուն մասի մեջ մասնագիտացել էին հայերը։

XVIII դարում մետաքսագործության զարգացումը Բրուսայում հասցրեց մետաքսի առանձին տեսակներ (և մետաքսից պատրաստված նոր ապրանքատեսակներ) արտադրող էսնաֆությունների կազմակերպմանը, ինչպես կուրուշի (մետաքսի և բամբակի խառնուրդով գործվածք), կուշակչի (մետաքսե գոտի պատրաստող) և սանդալչի (մետաքսի առանձին տեսակ արտադրող) էսնաֆները[15]։

Որքան և ինչ տեսակի արհեստներով են զբաղվել հայերը Կ. Պոլսում։ Առկա ոչ լրիվ տվյալները, գոնե XVIII դարի երկրորդ կեսի համար, մի որոշ պարզություն են մտցնում այս հարցում։ Այսպես, 1761 թ. դեկտեմբերի 6-ի մահաբակոնով (համախոսական) Գրիգոր Պասմաճյանի՝ Երուսաղեմի պատրիարք ընտրվելը վավերացրել են Կ. Պոլսի հայաբնակ թաղերի՝ «ալթը ջեմաաթի» (վեց համայնք կամ վեց հասարակություն, այսպես էր կոչվում պոլսահայ համայնքը մինչև XVIII դարի վերջը) համքարությունները։ Դրանք նեվահիրճիներ են (ակնագործ-ակնավաճառ), ոսկերիչներ, սահաթճիներ (ժամագործներ), իպեֆճիներ (մետաքսագործներ), թյուլպենտճիներ (մետաքսի տարբեր տեսակներ արտադրողներ), թերզիներ, ֆեռեստեճիներ (փայտավաճառներ) և այլն, ընդամենը՝ 18 համքարություն[16]։ Այս ցանկը, անշուշտ, լրիվ չէ և հեռու է ամբողջական լինելուց։ Նույն Գ. Պասմաճյանի՝ Կ. Պոլսի պատրիարքական ընտրության համախոսականը 1772 թ. փետրվարի 22-ին ստորագրել են 22 համքարություններ[17]։ Հայ էսնաֆի միությունների թվաքանակի շատ ավելի ընդարձակ, բայց դարձյալ ոչ վերջնական պատկերացում են տալիս XVIII դարի վերջին քառորդի՝ Զաքարիա պատրիարքի ժամանակվա երկու վավերագրեր։ 1788 թ., ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, մեծ վեզիր Յուսուֆ փաշան որոշակի քանակությամբ արծաթ է պահանջում հույներից, հայերից և հրեաներից. «նախ ի յունաց՝ հինգ հազար օխա արծաթ տալ ի գործարան դրամահատութեան. նոյնպէս ի հրէից՝ երեք հազար օխա եւ ի հայոց չորս հազար օխա»[18]։ Այս առթիվ պատրիարքի գումարած «ալթը ջեմաաթի» ժողովում հիշատակվում են սառաֆներ (սեղանավորներ), ֆեռեստեճիներ, թերզիներ, դազանճիներ (պղնձագործներ), սեստեճիներ (գդակագործներ), խուրասանճիներ (ծեփագործներ), պոզմաճիներ (հնակարկատներ) և այլն, ընդհանուրը՝ 65 էսնաֆություններ[19]։ Սակայն այս թիվը ևս հեռու է լրիվ լինելուց։ Կ. Պոլսի 1782 թ. մեծ հրդեհից հետո «ի նպաստ հրկիզելոց» հանգանակված դրամը վերջում տրամադրվել էր 72 էսնաֆությունների, իսկ դրանից առաջ հանգանակության մի մասը արդեն բաշխվել էր այլ էսնաֆությունների, ինչպես

14 Օրագրութիւն Երեմիա Չելէպի Քէօմիւրճեանի (հրատ. Մ. արք. Նշանեանի). Երուսաղէմ. 1939, էջ 249—250։

15 I. H. Uzuncarsili. Osmanli tarihi IV c., 2 kis. Ankara, 1959, s. 574.

16 Գր. Գալեմքյարյան. Կենսագրություն երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու... Վիեննա, 1915, էջ 335—338։

17 Նույն տեղում, էջ 347—350։

18 Դիվան հայոց պատմության, գիրք Ժ (հրատ. Գ. Աղանյան), Թիֆլիս, 1912, էջ 335։ Օխա—ծանրության չափ Օսմանյան կայսրությունում. Կ. Պոլսում համարժեք էր մոտ 1,282 գ (կայուն չափ չի ունեցել)։ Տե՛ս Аграрный строй Османской империи XV—XVII вв. Документы и материалы. Составление, перевод и комментарии А. С. Тверитиновой. М., 1963, с. 209.

19 Դիվան հայոց պատմության. գիրք ժ, էջ 336—338։

նշում է պատրիարքը՝ «որպէս զողորմութիւն միւս էսնաֆացն ցրուեցաք»[20]։ Հետևաբար, «ողորմություն» ստացած այս էսնաֆությունների թիվը պետք է միաներ։ Վերոհիշյալ 72 էսնաֆություններին, որ հնարավոր չէ անել, քանի որ չգիտենք, թե նախապես քանի էսնաֆության է բաշխվել դրամը։ Համենայն դեպս, հայ էսնաֆությունների թիվը առնվազն պետք է որ գերազանցած լինի հարյուրը։

Կորպորատիվ միությունները սկիզբ էին առնում դեռևս բյուզանդական ժամանակներից։ Նախքան Կ. Պոլսի գրավումը, հայ արհեստավորներ են բնակվել քաղաքին կից Կալաթա բնակավայրում, ուր կային հայկական եկեղեցիներ. Ֆաթիհ Մեհմեդի երեք վակֆիյներում (վակֆի՝ սեփականատիրական իրավունքի հաստատման փաստաթուղթ) հիշվում են բժիշկ Նիկոլան, հացագործներ Պավլոն, Անդրեասը, դերձակ Սթեֆիանոն՝ հայկական թաղերից[21]։ Արևմտյան Հայաստանի գրավված տարածքների հայ արհեստավորական կազմակերպությունները իրենց արմատներով միջնադարի խորքերն են գնում՝ սկիզբ առնելով Հայաստանի քաղաքներից։ Այս իմաստով կարևոր աղբյուր է Երզնկա քաղաքի հայ երիտասարդության միության կանոնադրության վերաբերյալ Լ. Խաչիկյանի հրապարակումը[22]։ Քրիստոնեական բարոյականության, ազատասիրության և փոխօգնության սկզբունքներն էին ընկած այդ կանոնադրության (1208 թ.)՝ եղբայրության վարքագծի կանոններում։ Օսմանյան կայսրությունում մահմեդական էսնաֆը, իր հերթին, ժառանգել էր հին ախիների՝ դերվիշ-սուֆիների բարոյականության նորմերը[23] և ինչպես քրիստոնյա արհեստավորները, դրանք հարմարեցրել օսմանյան սոցիալական միջավայրին ու համակեցության կանոններին։

Առհասարակ, քիչ է ուսումնասիրված, թե Կ. Պոլսի հայ էսնաֆը ինչ չափով է հարաբերվել մահմեդական կորպորատիվ միավորումներին, որ արհեստների բնագավառում է նրանց հետ կազմել մեկ էսնաֆություն։ Կարելի է որոշակիորեն ասել, որ որոշ արհեստների խմբում քրիստոնյա, այդ թվում և հայ արհեստավորները միավորվել են մահմեդական արհեստակիցների հետ՝ կազմելով կրոնական տեսակետից խառն կազմակերպություններ։ Արհեստների մի այլ խմբում նրանք գործել են առանձին, իբրև զուտ և անկախ էսնաֆություններ։ Խառն կորպորատիվ կազմակերպության մեջ ևս հայ արհեստավորները պահպանել են սեփական կրոնաբարոյական նորմերը, իսկ մահմեդականների հետ ունեցած նրանց կազմակերպական ընդհանրությունը, փոխադարձ իրավունքների ու պարտականությունների հավասարակշռությունը դրսևորվել է էսնաֆին հատուկ որոշ արարողությունների ու ծեսերի, առավել ևս՝ արտադրության և սպառման բնագավառում։ Առանձին հայ էսնաֆությունների գոյության օգտին է խոսում այն փաստը, որ բռնագաղթերի ժամանակ հայ արհեստավորները Կ. Պոլիս էին բերվում հայրենակցական խմբերով, զբաղեցնելով միևնույն թաղը և զբաղվելով միևնույն արհեստով, անկախ այն բանից, թե մայրաքաղաքում կայի՞ն իրենց արհեստակիցների (անկախ կրոնական պատկանելությունից) միավորումները, թե ոչ։ Այս իրողությունը ընդհանրական պետք է համարել այստեղ բնակեցված մյուս էթնակրոնական խմբերի համար (մահմեդականներ, հույներ, սլավոններ, մասնավորապես սերբեր ու բուլղարներ, հրեաներ, լատիններ և այլն)։ Էսնաֆի մի մասը կազմակերպորեն միավորված էր անկախ կրոնական հանգամանքից, մյուս դեպքերում զուգահեռ գործում էին առանձին մահմեդական ու քրիստոնեական համքարությունները, իսկ այլ դեպքերում հանդիպում էին արտակորպորատիվ,

---

20 Նույն տեղում, էջ 321։

21 Հ. Պերպերյան. Իսթանպուլի հայ բնակչությունը քաղաքին գրավումեն մինչև Ֆաթիհ Մեհմետ II-ի մահը. 1453—1481.—«Հանդես ամսօրյա», 1962, № 9—10, էջ 404, 423։

22 Լ. Խաչիկյան. Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը.— «Բանբեր Մատենադարանի», 1962, էջ 365—377։

23 В. А. Гордлевский. Государство сельджукидов в Малой Азии.—Избр. соч., т. I, М., 1960, с. 136.

էսնաֆից դուրս գործող արհեստավորներ[24]։ Ուշագրավ է Դարանաղցու մի վկայությունը հայ դերձակի աշակերտի՝ վարպետ դարձնելու արարողության մասին։ Արարողությունն ավարտվում է նորընծա վարպետի՝ «զամենեցուն աչն համբուրելով եւ շէխն եւ վարպետքն օրհնելով»[25]։ Շեյխի՝ մահմեդական արհեստապետի ներկայությունը ինքնին խոսում է այն մասին, որ Կոստանդնուպոլսի դերձակների (կամ տվյալ խմբի դերձակների) էսնաֆը միավորել է հայ և մահմեդական արհեստավորների (XVII դարի առաջին կես)։

Կային արհեստների որոշ տեսակներ, որոնցով ամբողջովին կամ գրեթե ամբողջովին զբաղվում էին մահմեդականները և նրանց մենաշնորհ իրավունքը սատարվում էր պետության կողմից։ Այսպես, մինչև սուլթան Մահմուդ II-ի ժամանակները մեղրամոմի հույժ եկամտաբեր արտադրությունն ու վաճառքը վերապահված էին միայն մահմեդականներին։ 1830-ական թթ. Արթին Պեզճյանը հաջողում է սուլթանից ստանալ մեղրամոմի մանուֆակտուրա հիմնելու ֆերման, որի արդյունքները բացառապես օգտագործվելու էին Եղիգուլեի ազգային հիվանդանոցի կարիքների համար։ Նա մահմեդականներին վերապահված արհեստներ է համարում թանկարժեք քարերի հղկումը, թանկարժեք մետաղների դրվագումը, ինչպես և որմնանկարչությունը[26]։ Մինչդեռ հանրահայտ է, որ արվեստի մակարդակ պահանջող զբաղմունքները՝ ոսկերչությունը, ինչպես և ճարտարապետությունն ու նկարչությունը հիմնականում մնում էին հույների և հայերի ձեռքին, որոնք անգերազանցելի էին այս բնագավառներում[27]։

Կայսրության ռազմատնտեսական հզորության անկումը XVI դարի վերջին և XVII դարի սկզբին, աքչեի արժեզրկումը և տնայնագործական արտադրության լճացումը, կրոնական հակամարտության հրահրումը՝ բուն օսմանյան պետության տրամաբանությամբ, անմիջականորեն անդրադառնում էին էսնաֆական կազմակերպությունների գործունեության վրա։ Արհեստագործությանը տնտեսական զգալի հարված հասցրեցին կայսրության աճող ռազմական ծախսերը, որոնք ծանրանում էին հարկատու բնակչության՝ ռայայի և արհեստավորական-առևտրական խավերի վրա։ Ջալալիների ապստամբության պատճառով խափանվեցին առևտրական վաղեմի ուղիները Արևմտյան Հայաստանի և փոքրասիական տարածքներում[28], թուլացան արհեստագործության կապերը գյուղատնտեսական արտադրության հետ. արհեստները զբաղվում կամ կտրվում էին հումքային բազայից, դատապարտվում գոյատևման նոր միջոցներ որոնելու։ Հետագայում, XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարում արհեստագործությունը շարունակում էր կորցնել իր տնտեսական զարգացման հեռանկարները եվրոպական արդյունաբերական արտադրանքի ներմուծման չափերի աննախընթաց ընդլայնման հետևանքով[29], երբ տեղական արտադրությունը անմրցունակ էր դուրս գալիս անդրծովյան ապրանքների կողքին։ Այս և համանման գործոնների ազդեցությամբ խորացան սոցիալական և էթնիկական հակասությունները էսնաֆի ներսում։ Կրոնական գերազանցության սկզբունքը մահմեդական էսնաֆին դնում էր շահեկան դրության

---

24 Н. Тодоров. Балканский город XV—XIX вв. М., 1976, с. 112.

25 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ. Երուսաղէմ, 1915, էջ 276։

26 M. A. Ubicini. Letters on Turkey. Part II. London, 1856, p. 286—310. Ուբիչինին, ինչպես և այլ հեղինակներ, սխալվում են. թանկարժեք քարերի հղկումը և թանկարժեք մետաղների դրվագազարդումը մտնում էին ոսկերիչների գործունեության ոլորտը, իսկ այդ նագավառում հայերը հայտնի էին դեռևս շատ ավելի վաղ ժամանակներից (Ղ. Ինճիճեան. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ե, Վենետիկ, 1804, էջ 128—129)։

27 В. А. Гордлевский. Государство сельджукидов в Малой Азии, с. 132.

28 Մ. Զուլալյան. Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI—XVII դարեր). Երևան, 1966, էջ 38։

29 М. С. Мейер. К характеристике экономической жизни городов Османской империи в XVII веке.—В кн.: Проблемы генезиса капитализма. М., 1978, с. 249.

մեջ, որ արտահայտվում էր հարկերից խուսափելու, դրանք ոչ մահմեդական էսնաֆի ուսերին դնելու իրողությունների ձևով։ Խառը էթնակրոնական միավորումներում կողմերի հարաբերությունները անխուսափելիորեն սրվեցին։ Իրանը ավելի խորացան այն բանից հետո, երբ ենիչերիները սկսեցին խուսափել ռազմական ծառայությունից և ամրանալով գավառներում ու տնտեսական բարեկեցության ձգտելով մայրաքաղաքում, ներթափանցեցին էսնաֆի մեջ[30]։ Արհեստագործական արդյունքների իրացումը՝ ի դեմս առևտրական շահույթի. ենիչերիների համար դառնում էր ոչ միայն հրապույրի, այլև հիմնական զբաղմունքի առարկա։ Էսնաֆի մեջ մտած ենիչերիները օգտվում էին իրենց դասի արտոնություններից, հեղինակություն դառնալով արհեստավորաառևտրական միջավայրում և դրանով ավելի խորացնելով հակասությունները կորպորատիվ կազմակերպության մեջ։ Այս տեսակետից թուրքական արհեստավորական կազմակերպությունները իրենց կրոնական-ծիսական բազմաձև արարողություններով վարել են ոչ մահմեդական արհեստակիցներին իսլամացնելու կամ իրենց հավատի անվիճելի գերազանցությամբ ճնշելու բացահայտ ուղեգիծ, որին անդրադարձել է Հ. Անասյանը իր «Թուրքական ֆութուվվաթը և հայերը» ուշագրավ, թեև մի քանի դեպքերում վիճելի դրույթներ պարունակող աշխատության մեջ[31]։ Վ. Գորդլևսկին, իր հերթին, նկատում էր, որ արհեստավոր մահմեդականները քրիստոնյա վարպետներից յուրացնելով արհեստի հմտությունները, աստիճանաբար նրանց դուրս էին մղում արհեստավորական կազմակերպություններից[32]։

Կ. Պոլսի հայ էսնաֆը, ինչպես ժամանակի մյուս արհեստավորական միությունները, իր այս կամ այն առանձնահատկություններով հանդերձ, ունեցել է սոցիալական ու կազմակերպական որոշակի կառուցվածք։ Արհեստավորների գլուխ էր կանգնած վարպետը, ավելի ներքև՝ ենթավարպետը և ստորին աստիճանին՝ աշակերտը։

Էսնաֆի համար արարողության արժանի կարևոր իրադարձություն էր աշակերտի՝ վարպետի կոչում ստանալը։ Գրիգոր Դարանաղցու՝ մեր արդեն հիշած հատվածը, որ պատկերացում է տալիս դրա մասին, մեջբերում ենք ամբողջովին. «Եւ իբրեւ եղեւ օր մի զի դերձակի աշակերտ կու հանեն ի վարպետէ զոր իւրեանքն ըռովան (ձեռնադրում, շնորհաբաշխում—Ա. Խ.) ասեն։ Սովորութիւն կա իւրեանց միջումն քաղաքական օրէնս եղեալ (իմա օրենքով հաստատված—Ա. Խ.) որ կու ժողովին ութն կամ տասն աշակերտս այլ յաւելի կամ պակաս եւ ի մի վայր ժողովելով, մեծ ճաշ եւ կերակուր պատրաստելով աշակերտացն եւ իւրեանց ճարտարապետն (արհեստապետ—Ա. Խ.) յետ ջամբելոյ կերակրոյն իւր վարպետին պարգեւք տալով եւ ապա այլ դերձակաց իւրաքանչիւրոյն թէ տարեղ թէ այլ ինչ փոքր իրենց դնելով առջի եւ դամենեցուն աջն համբուրելով եւ շէխն եւ վարպետքն օրհնելով եւ ապա կու արձակին առանձին լինելով։ Այսպէս սահմանք եւ սովորութիւն եւ բարեկարգութիւն կա ի մէջ ամենայն արուեստաւորացն՝ զատ ի մեր կարդացողացն եւ դրագրացն»[33]։

Իրոք, մահմեդական արհեստակիցների հետ գտնվելով միևնույն կազմակերպության մեջ, հայ դերձակները, որոնց մասին գրում է Դարանաղցին, ենթարկվել են մահմեդական էսնաֆի կանոնադրությանը (ֆութուվվաթնամե)։

Կ. Պոլսի դրագիրները կամ այլ մտավորականները, ի տարբերություն

---

30 Նույն տեղում, էջ 263։

31 «Հասկ», Հայագիտական տարեգիրք. Անթիլիաս, 1995, էջ 221—256։

32 В. А. Гордлевский. Стамбул в XVII веке.—Избр. соч., т. IV. М., 1968, с. 26.

33 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, էջ 276։ Այս իմաստով շատ արժեքավոր է XVII—XVIII դդ. հեղինակ Ուրախ Գրիգորից մեզ հասած վավերագիրը էսնաֆի կրոնական ծեսերի ու արարողությունների վերաբերյալ, որ քննարկված է Հ. Անասյանի վերոհիշյալ աշխատության մեջ։

մյուս էսնաֆների, չեն ունեցել այդպիսի կանոնադրություն, թեև կազմել են ստանձին էսնաֆություն։

Էսնաֆի բարոյական վարքագծի նորմերն ամփոփող կանոնադրությունից բացի և դրա կողքին գործում էին նաև օսմանյան օրենքները, որոնց միջոցով պետությունը վերահսկում էր արհեստավորի արտադրական գործունեությունը, դրխավորապես արդյունքների իրացումն ու դրան առնչվող պայմանները։ Դրանք հանգամանորեն կարգավորում էին արտադրանքի որակի և չափերի հետ կապվող խնդիրները՝ շուկայական սակագները, իրացման պայմանները, տեղը, տարածքի սահմանները և այլն։ Պետության այսպիսի ակտիվ միջամտության պայմաններում դժվար է անվերապահորեն ընդունել արևմտյան այն ուսումնասիրողների տեսակետը, ըստ որի՝ էսնաֆը զուտ ինքնակառավարվող միություն էր, ազատ՝ իր գործունեության մեջ։ Սուլթան Սելիմ I-ի (1512—1520) օրենքներում բավական ցայտուն ի հայտ է գալիս պետության խիստ վերահսկողությունը արհեստավորների գործունեության, և մանավանդ, նրանց արտադրանքի իրացման նկատմամբ։ Մուհթեսիբը՝ շուկայում դատական իշխանության առաջին դեմքը, ամենայն աշխուժությամբ պետք է հետևեր ապրանքների գներին, մաքսերին, ապահովեր շուկայական սակագների սահմանված չափը։ Տուգանք էր դրվում թերակշռողների[34], անորակ մթերքի (ամենից առաջ՝ հացի և մսի), ապրանքների տեսակավորումը խախտելու համար։ Մուհթեսիբը հետևում էր, որ ապրանքները վաճառվեն միայն շուկայում, բուն քաղաքում առևտուրն արգելված էր։ Մի քանի դեպքերում դրամական տուգանքը (բավական լիբերալ չափով՝ մեկ և ավելի աքչե) զուգորդվում էր ճիպոտի հարվածներով[35]։ Վերահսկողության էր ենթարկվում, հետևաբար, բարձր էր գնահատվում հումքը։ Արգելված էր հում կաշին վաճառել որևէ մեկի, բացի կոշկակարներից, այսինքն, այն պետք է իրացվեր միայն էսնաֆի շրջանակներում, օտարականներին այդ հումքի վաճառքն ընդհանրապես արգելվում էր[36]։ Մուհթեսիբը ստուգման էր ենթարկում բաղնեպաններին՝ ելնելով կրոնական պատվիրաններից. ածելին պետք է լիներ սուր, ջուրը և անձեռոցիկները՝ մաքուր։ «Գյավուրներին տրված անձեռոցիկները,— ասված է օրենքում,— թող մահմեդականներին չտան։ Գյավուրների անձեռոցիկների վրա թող հատուկ նշաններ արվեն։ Նրանք, ովքեր չկատարեն ասվածը, թող խիստ պատժվեն»։ Կամ՝ «Սափրիչները թող ստուգվեն։ Թող նրանք չսափրեն մահմեդականներին նույն ածելիով, որով սափրել են գյավուրներին»[37]։ Կարգավորվում էին դերձակների կարած հագուստների գները. պատժվում էին այն դերձակները, որոնք ժամանակին չէին կատարել պատվերը[38]։ Սելիմ I-ի կանոնագրքում հիշվում են երկու և կես տասնյակի չափ արհեստներ և արհեստավորներ (հացագործ, մսագործ, կոշկակար, դերձակ, ոսկերիչ և այլն)։

Կոստանդնուպոլսի բեզեստաններում և շուկաներում մուհթեսիբի հետևում ուրվագծվում էր կադիի (դատավոր) հույժ ազդեցիկ կերպարանքը։ Կառավարության կողմից և օրենքի շրջանակներում կադին էր կարգավորում էսնաֆի գործունեության իրավական կողմը՝ հումքի ձեռքբերումից մինչև ար-

---

34 Մուհթեսիբի մոտ էր պահվում զգայուն մի կշեռք, որով ստուգվում էին շուկաների բոլոր կշեռքները (H. Gibb and. H. Bowen. Islamic Society and the West. Vol I, p. I, London, 1950, p. 287).

35 Книга законов султана Селима I (публикация текста, перевод, терминологические комментарии и предисловие А. С. Тверитиновой). М., 1969, с. 67—69. Մեղանչած արհեստավորները երբեմն իշխանավորների դաժանության զոհ էին դառնում։ 1776 թ. ժամանակագիր Հակոբ Տիվրիկցին գրում էր, որ Կ. Պոլսում «Տէօհիւրն էր Իզզէթլի Ահմէտ փաշայն, որ էր արիւնասէր, շատ հացագործ եւ պահալ կախեալ էր բարկութիւն նորա» (Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հ. 2 (կազմ. Վ. Հակոբյան). Երևան, 1956, էջ 461)։

36 Книга законов султана Селима I, с. 71.

37 Նույն տեղում, էջ 73։

38 Նույն տեղում, էջ 70։

տադրանքի իրացման պայմանների պահպանումը։ Մուհթեսիբների առօրեական աշխատանքը վերահսկելուց բացի, կադին մեծ վեզիրի և ենիչերի աղասու (գլխավոր ենիչերի) հետ միասին ստուգայցեր էր անում Կ. Պոլսի շուկաներում՝ հետևելով կարգուկանոնի պահպանությանը և սուլթանի այն հրամանների ճշտիվ կատարմանը, որոնք վերաբերում էին առևտրին և դրան առնչվող մանրամասներին։ Շուկաների բոլոր խանութները, կրպակներն ու արհեստանոցները բացելու թույլտվությունը, առանց բացառության, տալիս էր միայն կադին՝ հատուկ արտոնագրով[39], որն ամրագրում էր տնօրինողի իրավունքները շինության, դրա զբաղեցրած հողամասի և գույքի նկատմամբ[40]։ Միաժամանակ, կադին զուգակցում էր արհեստների և առևտրի վերահսկողությունը բարոյական նորմերի պահպանության հետ՝ վերջին դեպքում հանդես գալով իբրև կրոնական օրենքի (շերի) ներկայացուցիչ, դատաիրավական հարաբերությունները կարգավորող անձ։ Նա նշանակվում էր ուլեմների դասից և համարվում էր ամենախոշոր պաշտոնյաներից մեկը օսմանյան կառավարող վերնախավում[41]։

Բացի արտադրական ենթակայական միավորից (վարպետ-աշակերտ, վարպետ-ենթավարպետ-աշակերտ), էսնաֆությունները ի հայտ էին բերում նաև կազմակերպական հիերարխիական ենթակայություն[42] տվյալ էսնաֆության շրջանակներում։ Արհեստավորների ու առևտրականների վերնախավում նշանակալի ազդեցություն են ձեք բերում իգիթբաշիներն ու Ֆյահիյաները, որոնց գործունեությունն անմիջականորեն կապված էր արտադրության նյութական կողմի հետ։ Ընտրվելով վարպետների ժողովի, այսպես կոչված «լոնջայի» (օթյակ) կողմից, նրանք իրենց ազդեցությունը տարածել էին ոչ միայն արհեստավորների մեջ, այլև ամբողջ պոլսահայ համայնքում։ Պետք է կարծել, որ իգիթբաշիների և Ֆյահիյաների ազդեցության աճը մի հայտնի չափով առնչվում էր հայկական կորպորատիվ կազմակերպությունների առանձնացման (խառն կազմակերպություններից), սեփական «լոնջաների» ամրապրնդման կամ բազմացման հետ։ XIX դարի սկզբների՝ Դանիելի պատրիարքության ժամանակվա մի պաշտոնական գրություն հուշում է այն միտքը, որ հայ էսնաֆի «լոնջաները» արդեն ընդգրկում էին ամբողջ պոլսահայ համայնքը։ Փաստն այն է, որ պատրիարքը օսմանյան իշխանություններից ստացած թեզքիրեն (հրահանգը) պոլսահայ հանրության մեջ տարածում էր էսնաֆի «լոնջաների» միջոցով։ Մեջբերում ենք պատրիարքի շրջաբերականի սկիզբը. «Ի տէր Դանիէլ արքեպիսկոպոսէ մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ, աստուածային օրհնութեամբ և ողջունիւ ծաներուք (այս ինչ) էսնաֆի միւթէվելլիք, իկիթպաշիք և գլխաւոր վարպետայք (քյահյաները—Ա. Խ.) ի գաւխրատական և պատուիրական թէսկէրէիս առ ձեզ՝ պարտիք ի ձեր լոնճալի տեղն ժողով անել և բոլոր վարպետներն ձեր էսնաֆին ժողովել՝ էրքեանճէ ամենեցուն պատէր և ամէն հայր զիւր զաւակն և զիւր աշկերտն խրատեն...»[43]։

Գր. Պասմաճյանին առնչվող մեր արդեն հիշած վավերագրում, ի թիվս

---

39 Արտոնագիրը, որ կոչվում էր գեդիկ, իր հերթին սեփականության ձև էր. տնօրինողը կարող էր այն կտակել, գրավ դնել կամ վաճառել։ Առանց էսնաֆի ավագների թույլտվության գեդիկ չէր արվում, որ և վկայում է էսնաֆի արտադրական կազմակերպական իրավունքների մասին (տե՛ս H. Gibb and H. Bowen. Op. cit, p. 282)

40 Н. А. Иванов. Указ. соч., с. 189.

41 H. Inalcık. Op. cit, p. 104.

42 Հիերարխիական անսովոր բազմաստիճան համակարգ էին ներկայացնում սուլթանի հարեմում զբաղված արհեստավորները, որոնց նկամուտները բաշխվում էին ըստ ավագության։ Սանդուխքի վերին աստիճանին էր կանգնած սարայ ուստան (պալատի վարպետ), ապա՝ առաջին սրճեփ, երկրորդ սրճեփ, հետո՝ առաջին, երկրորդ լվացարարուհի, գանձապետ, նույնիսկ չորրորդ և հինգերորդ դանձապետ և այլն (տե՛ս P. Tuglac. Osmanli saray kadınları, Istanbul, 1985, s. 57):

43 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. IV (կազմ. Ն. եպ. Պողարեան), Երուսաղէմ, 1956, էջ 142։

այլ արհեստապետերի, իրենց կնիքն են դրել և ստորագրել «էսկիլնոյ (հնակարկատ) եկիտ պաշի ուստա Եղիան», «պոզվանոց (հնավաճառ) իկիթպաշի Յոսէփր», ինչպես և «սառաֆաց քեահեայ խոճայ Աստուածատուրը»[44]։ Նշված վավերագիրը ուշագրավ է նաև այն տեսակետից, որ վկայում է ամիրաների, որպես պոլսահայ վերնախավի հայտնության և ազդեցության մասին։ Ֆաստանուղիթը կնիքել և ստորագրել են կեսարացի խալֆա (ճարտարապետ. կեսարացիների մեջ շատ էին շինարարներն ու ճարտարապետները) Կարապետ ամիրան, Ս. Աստվածածնի եկեղեցու մյութեվելի Հակոբ ամիրան և էլի ուրիշ ամիրաներ[45]։

Այստեղ ընդհանուր մոտեցում ենք ամիրաների՝ որպես պոլսահայ վերնախավի[46] ինքնության կամ դասային նկարագրի ձևավորմանը։ Անկասկած, նրանք հրապարակ են իջել XVIII դարի երկրորդ կեսին՝ փոխարինելով տրնտեսապես ազդեցիկ և օսմանյան իշխանությունների հովանավորությունը վայելող չելեբիներին և խոջաներին՝ սրանց հետ ունենալով այն ընդհանրությունը, որ մտնում էին համապատասխան էսնաֆի մեջ։ Ամիրաները ոչ միայն խոշոր սեղանավորներ էին, վաճառականներ, այլև արհեստապետեր, վարպետ-ուստաների մեջ իրենց կարողությամբ ու դիրքով աչքի ընկնող անհատներ։ Նրանց հատկանշական կողմերից մեկը, թերևս, արքունիքում կամ գավառներում կարևոր պաշտոններ զբաղեցնելն էր (արքունի ոսկերիչ, արքունի վաճառապետ, արքունի ճարտարապետ, փաշաների սեղանավորներ և այլն)։ Ամիրաների մի ամբողջ խումբ իր պաշտոնակալության համար շատ բանով էր պարտական էսնաֆում և համայնքում նվաճած ազդեցիկ դիրքին։ Էսնաֆի մեջ ֆյանյանների վերելքը համապատասխանում է ամիրաների հայտնության ժամանակին։ Այս երևույթը դայտունորեն երևում է մի փոքր ավելի ուշ՝ XIX դարի սկզբի Եգիպտոսում, երբ արհեստապետ-շեյխերը փաշայության կարգի իրավունք ստացան պաշտոնական հիերարխիայի վերնամասում[47]։

Ամիրաները իրականացնում էին պատրիարքի գործադիր իշխանությունը «ալթը ջեմաաթի» հարկերը, տուրքերը գանձելու, վակֆի հետ կապվող նյութական, դրամական, բարեգործական և այլ գործառնությունների ասպարեզում։ Վերը նշված՝ 1772 թ. փետրվարի 22-ի մահսարական ստորագրել են նախ հոգևորականները (51 մարդ՝ ավագերեց, աթոռակալ և ապա հասարակ քահանաներ), որոնց հետո՝ ամիրաները (8 մարդ) և վերջում՝ շուրջ 6 և կես տասնյակ արհեստավորներ։ Հետևաբար, XVIII դարի 70-ականի սկզբին ամիրաներն արդեն ապահովել էին վերնախավի իրենց դիրքը պոլսահայ հասարակության մեջ։ Ամիրաների այդ դերը չէր ամրագրվում որևէ օրենքով, սակայն ինքնաբերաբար ընդունվում էր և՛ համայնքում, և՛ օսմանյան իշխանությունների կողմից։ Ավելին, էսնաֆի գլխավորի՝ արհեստապետի տեղը, տվյալ դեպքում՝ նաև ամիրաների դրաղեցրած պաշտոնը հարատևում էր, շատ դեպքերում՝ ժառանգաբար, նույնը, ինչ կատարվում էր մահմեդական արհեստա-

---

44 Գր. Գալեմքյարյան. Կենսագրություն երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու. Վիեննա, 1915, էջ 336, 346, 350։

45 Նույն տեղում, էջ 346—347։

46 Հ. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. Երևան, 1962, էջ 59—62։ Ամիրա հորջորջումը, անշուշտ, կապվում է թուրք-սելջուկյան «ամիր» կառավարիչ, գլխավոր պաշտոնյա հասկացությունների հետ։ 1453 թ. մի հիշատակարանում՝ «ի կուսակ, գիշխանն Երզրնկա քաղաքին և ի(40) անուանի ամիրայ զհետ նորա» (Գ. Սրվանձտյանց. Թորոս աղբար, հ. Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 381)։ 1693 թ. ևս ամիրան հիշվում է նույն՝ իշխանավորի իմաստով. «Եւ ժողովեցան առ ամիրան և կտրեցին արեան դին» (նույն տեղում, էջ 321)։ Ամիրա պատվանունը հայերի մեջ իմաստային ձևախախտման էր ենթարկվելու և դասային հասցեագրում էր ստանալու XVIII դարի երկրորդ կեսին։ Բ. Կյուլևսերյանը նշում է, որ դրանից առաջ «ամիրա» կոչումը դեռ ծանոթ չէ (Բ. Կյուլեսերյան. Կոլոտ Հովհաննես պատրիարք. Վիեննա, 1904, էջ 7)։

47 H. Gibb and H. Bowen. Op. cit., p. 294.

պետերի միջավայրում[48]։ Ժառանգաբար էին անցնում նաև արքունիքում արհեստապետերի պաշտոնները։ Այսպես, Տյուզյանների շատ սերունդներ, մասնավորաբար, XVIII դարի երկրորդ քառորդից հետո, փաստորեն ժառանգաբար զբաղեցրել են արքունի ոսկերչապետի պաշտոնը[49]։ Նույն դարի երկրորդ կեսից սկսվում է ճարտարապետ ամիրա Պալյանների վերելքը, դարավերջին՝ Տատյանների տոհմի առաջնությունը վառոդի, ռազմի արտադրության և բանակը անհրաժեշտ հանդերձանքով ապահովելու գործում։

XVIII դարի երկրորդ կեսին էսնաֆի վերնախավը, մանավանդ մեծ քաղաքներում, տեղական արտադրությունն ու առևտուրը իրականացնելու, նյութական հնարավորությունները ընդլայնելու համեմատ, ավելի մոտիկից է առնչվում իշխանություններին, ձեռք բերում որոշակի ազդեցություն։ Այս գործընթացը մի որոշ չափով արագանում էր ենիչերիների՝ էսնաֆի հետ սերտաճելու իրողությամբ, ենիչերիների գլխավորների ու էսնաֆի պետերի ազգակցական առնչություններով։ Հայ էսնաֆի ներսում ևս այդ փոփոխությունները, արհեստապետերի սերտ կապերը պալատի և վարչական հիերարխիայի հետ հասցրին այն բանին, որ խոջաների ու չելեբիների[50] հին վերնախավը տեղի տվեց օսմանյան բարձր պաշտոնեության հետ շատ ավելի ծավալուն և շփման լայն եզրեր ունեցող մի նոր դասի՝ ամիրայության հաստատմանը։ Ամիրա-սեղանավորների գործունեության եռուն շրջանում անգլիացի հեղինակը իրավացիորեն նկատում էր, որ տուրքեր հավաքելու գործում ամիրաների լայնախոհությունը, առևտրականի գործարար հատկությունները և փաշաների հանդեպ ցուցաբերած ճկուն վերաբերմունքը նրանց արագորեն հարստություն կուտակելու հնարավորություն են տալիս[51]։

Հարկերի հավաքումը և, բնականաբար, դրա մի մասի յուրացումը պոլսահայ վերնախավին հնարավորություն էր տալիս դեռևս XVII դարի երկրորդ կեսին միջամուխ լինել պատրիարքական ընտրություններին, իրենց անմիջական ազդեցությունը թողնել դրանց վրա, միաժամանակ, ի գիտություն ընդունելով Բ. Դռան հուշարկումները՝ պատրիարքական այս կամ այն թեկնածուին նախապատվություն տալիս։ Ամենին, էսնաֆի դիտավորները, որոնք ակտիվորեն մասնակցում էին պատրիարքական աթոռի շուրջ ծավալվող բախումներին, պատեհ առիթի դեպքում իրենք էին ձգտում դավթել այդ աթոռը։ 1679 թ. այս կերպ պատրիարքական գահին հայտնվեց Սարգիս Էմմեհենն՝ հացագործ արհեստապետը, որը նախասես ճանաչելով հոգևոր իշխանության վայելքները, երբ պատրիարքական տեղապահ էր, իր նպատակին հասնելու համար հասցրել էր կրոնական կարգ ընդունել։ 1689—1692 թթ. պատրիարքական աթոռին են հավակնել նաև այլ աշխարհականներ՝ Թորոս Ստամպոլցին, Սաքա օղլու դերձակը, համամճի Շահինը, անշուշտ, էսնաֆի մեջ պաշտոն և հեղինակություն վայելող անձինք[52]։ Աշխարհական տեղակալները էական դեր էին կատարում դեռևս 1650-ական թթ. պատրիարքական երկպառակությունների ժամանակ։ 1659 թ. այդ տեղակալները, որոնց թիվը հասնում էր 24-ի, հա-

---

48 Н. А. Иванов. Указ. соч., с. 190.

49 Գ. Մենեվիշյան. Ազգաբանություն ազնվական զարմին Տյուզյանց. Վիեննա, 1890, էջ 10—33։

50 Բոլորովին այլ բնույթ ուներ «մահտեսի» պատվանունը, որը պարզապես տեղակացնում էր կրողի՝ Երուսաղեմ այցելած լինելը և կապ չուներ նրա սոցիալական բնութագրի հետ։ Մահտեսի կարող էին կոչվել և չելեբիները, և՛ խոջաները, և՛ ամիրաները, և՛ կանայք, և՛ ցանկացած մեկը՝ վերոնշյալ պայմանով։ Հիմնավորված չի թվում մահտեսիներին իրրև «հրեելիների դաս» առանձնացնելը (Հ. Ճ. Սիրունի. Պոլիս և իր գերը. հ. 1, Բեյրութ, 1965, էջ 492)։ Իրոք, հայ վերնախավը տիտղոսների հանդեպ ցուցաբերում էր զարմանալի թուլություն (տե՛ս Հ. Անասյան. նշվ. աշխ., էջ 67)։

51 D. Urquart. Turkey and its resources: its municipal organization and free trade. London, 1833, p. 107—108.

52 Հ. Մրմրյան. Մասնական պատմություն հայ մեծատուններու. Կ. Պոլիս, 1909, էջ 50։

չոդեցին տապալել պատրիարք Թովմա Բերիացուն և սաստել սրան սատարող Թրլիլյաններին։ Աշխարհական տեղակալների մեջ էին առևտրական էսնաֆի գլխավոր, հույժ ազդեցիկ (հարստությամբ և պալատի հետ հաստատած կապերով) խոջա Ռուհիջանը, էմմեճի Պեկլերը, բեռեստեճի Գրիգորը, յազրճի Հարությունը և այլք, գրեթե բոլորն էլ էսնաֆի գլխավորներ[53]։

Կ. Պոլսի էսնաֆի արտադրանքը շուկաներում իրացվելու դեպքում արհեստավորները հանդես էին գալիս որպես առևտրի ասպարեզն ընդգրկված արտադրողներ, ուստի շատ հաճախ արհեստավորը կրում էր նույն մականունը ինչ առևտրականը։ Էմմեճին կարող էր նշանակել և՛ հացթուխ, և՛ հացավաճառ. բեռեստեճի՝ և՛ փայտահատ, և՛ փայտավաճառ, ճիզմեճի՝ և՛ կոշկակար, և՛ կոշկավաճառ և այլն։ XVI—XVIII դդ. մայրաքաղաքի բնակչությունը (փակ, մասնագիտացված շուկաներ) լեփ-լեցուն էին արհեստավոր և առևտրական հաստատությունների (մահուդագործ), ոսկերիչներով, գազազներով (մետաքսագործ), ճեվահիրճիներով (ակնավաճառ), ժամագործներով և բազմաթիվ այլ առևտրական արհեստավորներով։ XVII դարի առաջին քառորդին Կ. Պոլիս այցելած Սիմեոն Լեհացին թվարկում է շուկայում գործող արհեստավորների խանութները Յասրբ բազարի (գերիների շուկա) մոտակայքում, ուր իրենց ապրանքներն էին վաճառում «յուղաճիճ, ֆիթապճիճ, սիրմաճիճ և այլ խանութի ազգ և ազգ»[54]։

Այս առևտրական էսնաֆի կողքին և կամ դրանից անջատ գործում էր զուտ առևտրական էսնաֆը, որ կազմված էր դրամատեր հարուստ վաճառականներից և միջակ ու մանր առևտրականներից։ Պոլսեցի առևտրականները գործում էին ոչ միայն մայրաքաղաքում, այլև երկրի մյուս տարածքներում և նրա սահմաններից դուրս, լեվանտի առևտրահրապարակներում և այլուր։ Խոշոր վաճառականների դասն ուներ առևտրով զբաղվելու արտոնագիր՝ բերաթ (այսպես կոչված բերաթի վաճառականներ), որոնք որոշակի առևտրական արտոնություններ ունեին (ինչ-ինչ հարկերից ազատ լինելու կամ համեմատաբար թեթև հարկեր վճարելու իմաստով)[55]։ Կապիտուլյացիաների ռեժիմի պայմաններում ընդլայնվում էր նաև պոլսահայ առևտրականության միջնորդ դերը։ XVII դարի երկրորդ կեսին Նիդեռլանդներին տրված առևտրական արտոնությունները (1668, 1680 թթ.)[56] նպաստեցին հոլանդական առևտրի ծավալմանը լեվանտում, որից օգտվեցին նաև Զմյուռնիայի և Կ. Պոլսի հայ վաճառականները։ Հայ վաճառականների էսնաֆի վրա հասկանալի ազդեցություն ունեին օսմանյան արքունիքի հետ կապված խոշոր վաճառականները։ XVIII դարի երկրորդ քառորդին արքունի «ծայրագույն վաճառապետերն» էին մահտեսի Սեղբեստրոսը, Ալեքսանյան Պետրոս ամիրան և ակնեցի Ղազար ամիրան[57]։

Հայ արհեստավորների հմտության և տաղանդի շնորհիվ որակական փոփոխություններ էին կատարվում արհեստի ոչ քիչ տեսակների մեջ։ Մայրաքաղաքի հայերն էին հնարել և կատարելագործել ծաղկենկար բեհեզը (Գուդկունճուբ Թադամասի մի արհեստավորի ձեռքով), որի շնորհիվ Սկյուտարում XVIII դարի երկրորդ կեսին լայն թափ էր ստացել յազմայի արհեստագործությունը[58]։ Կ. Պոլսի սահմաններից դուրս էր եկել հայ ոսկերիչների, արծաթագործների, ակնագործների, շինարարների հռչակը։ Մուստաֆա III-ի և Համիդ I-ի ժամանակներում (XVIII դարի երկրորդ կես) նրանց պատրաստած արդյունքները իրենց որակով հաճախ գերազանցում էին եվրոպական արտադրանքը։ Արժանի համբավ ունեին հայ ժամագործները, նրանց մեջ ոչ միայն նորոգողներ կային.

---

53 Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները։ Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի. Կ. Պոլիս. 1901, էջ 101։ Խոջա Ռուհիջանը մեծ վեզիրի քյուրջիպաշին էր (Հ. Ճ. Սիրունի. Նշվ. աշխ., էջ 498)։

54 Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն. Վիեննա, 1936, էջ 20։

55 M. Ubicini. Letters on Turkey. Part II, London, 1856, p. 316

56 I. Uzuncarsili. Osmanli tarihi. III c., 2 kis. Ankara, 1954, s. 237

57 Բ. Կյուլեսերյան. Նշվ. աշխ., էջ 32։ Նույնի՝ Հիշատակարան Պասմաճյան Գրիգոր պատրիարքի. Փարիզ, 1908, էջ 10։

58 Հ. Մերմրյան. Թուրքահայոց հին վաճառականություն և վաճառականք, էջ 13։

այլև՝ զարպետ մեխանիկներ[59]։ Հարգի էին հայ զինագործների որակյալ արտադրանքները՝ սուր, հրացանի փող, զենքի այլևայլ տեսակների նորոգում և այլն։ Զենքին և ռազմական գործողություններին, ինչպես և բանակի սպասարկմանն ուղղվող արհեստավորները կազմում էին բանակի բաղկացուցիչ մասը և ուղեկցում նրան աբսողջ արշավանքի ընթացքում։ Բանակին ծառայող արհեստավորները և առևտրականները ազատվում էին հարկերից[60], որ արհեստագետների համար նյութական հավելյալ եկամուտներ էր խոստանում։ Ի դեպ, վերը հիշված պատրիարք Սարգիս Էմմեքճին իր հոգևոր կարիերայի համար, ակնհայտորեն, շատ էր պարտական այն բանին, որ եղել էր օսմանյան բանակի հացի մատակարարը. «Սա ի բանակն օսմանցոց հացագործ լինելով առնոզպատրիարգութիւնն...»,—գրում է լավատեղյակ հեղինակը[61]։

XVII դարի սկզբներից Օսմանյան Թուրքիայում արհեստավորների աշխատանքի արտադրողականության լճացումը և ապա անկումը ավելի էր կաշկանդում տեղական առևտուրը ոչ ունևոր՝ քաղաքային ու գյուղական գնորդների շրջանում։ Մահմեդական էսնաֆը սոցիալական իր անկայուն կացությանը արձագանքում էր տարերային հուզումներով, ենիչերիական խռովություններին հարելով և այլ պոռթկումներով։ 1651 թ. օգոստոսին աքչեի արժեզրկման պատճառով մայրաքաղաքում բռնկված խռովությանը մասնակցում էին 50 հազարի չափ արհեստավորներ ու առևտրականներ։ Դրա հետևանքով պաշտոնանկ արվեցին մեծ վեզիրն ու մի քանի այլ պաշտոնյաներ[62]։ 1703 թ. հուզումներին գործուն մասնակցություն ունեցան նեպեճիները (զինագործներ), որոնք ենիչերիների հետ կիսում էին աշխատավարձերը պարբերաբար ուշ ստանալու խորին դժգոհությունը[63]։ Հայտնի է 1730 թ. էսնաֆի խռովությունը՝ ենիչերի-առևտրական Պատրոնա Խալիլի ղեկավարությամբ և այլն։

Սայրաքաղաքի ոչ մահմեդական էսնաֆը միշտ կամ գրեթե միշտ հեռու էր մնում օսմանցի էսնաֆի և ենիչերիների հուզումներից, որոնք սպառնում էին նրա անվտանգությանը՝ ուղեկցվելով այլակրոնների թալանով, կողոպուտով և այլ բռնություններով։ Տիրապետող օսմանյան տարրի կրոնական ու սոցիալական գերազանցությունը դրսևորվում էր նրա և էթնակրոնական մյուս հանրությունների փոխհարաբերությունների ցանկացած ոլորտում և հիմքից իսկ ոչնչացնում նրանց ընդհանուր ընդդիմության ամեն մի հնարավորություն։ Կոստանդնուպոլսի հայ էսնաֆի մեջ սոցիալական բողոքն ու ընդվզումները ուղղվում էին համայնքի աշխարհիկ ու կղերական վերնախավի դեմ, որչափով սրանք էին իրականացնում իշխանությունների հարկային քաղաքականությունը։ Դավիթ Արևելցու պատրիարքության ժամանակ, 1650 թ., պատրիարքարանի պարտքը Բ. Դռանը հասել էր 40.000 ղուրուշի, որ լուրջ հուզումներ էր առաջացրել Կ. Պոլսի էսնաֆի մեջ[64]։

Թուրքական իշխանությունները, ի հարկին, խուսափում էին մահմեդական էսնաֆին գրգռելուց՝ բավարարելով նրա պահանջները։ 1657 թ. մեծ վեզիր

---

59 M. Ubicini. Op. cit., p. 316.

60 Книга путешествия Эвлия Челеби. М., 1961, с. 273 К. Весела. К вопросу о положении христианской церкви в Османском государстве.—В кн.: Османская империя. Государственная власть и социально-политическая структура. М., 1990. с. 119

61 Հ. Պերպերյան. Կ. Պոլսո հայ պատրիարքներու գավազանագիրքը ըստ Մաղաքիա գպիր Ձեվահիրճյանի.—«Հանդէս ամսօրեայ», 1963, № 7—9, էջ 334։

62 J. H. Uzuncarsılı. Osmanlı tarihi. III c., I kis. Ankara, 1951, s. 255--258.

63 М. А. Мусаев. Восстание в Стамбуле в 1703г.—В кн.: Османская империя. Система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986 с. 200—217. Այս հեղինակը, սակայն, մեղանչում է ճշմարտության առջև, երբ ոչ մահմեդական էսնաֆի «ապստամբությունից հիմնականում հեռու մնալու» երևույթը բացատրում է նրա իբր, «արտոնյալ դրությամբ»։ Իրականում օրինականացված արտոնություններից ամենուրեք օգտվում էին տիրապետող կրոնի հետևորդները։

64 Ե. Քլիմիրճեան. Պատմութիւն համառօտ Դ՚ տարւոյ օսմանցոց թագաւորացն, Երևան, 1982, էջ 243։

տեղի էր տվել թուրք համետագործների բողոքին՝ վերացնելով սուրսեթ կոչվող հարկը (գանձվում էր պատերազմական ժամանակներում հարդի և գարու դիմաց, իբրև արտակարգ հարկ)։ Դրան հակառակ, ֆյուրեկնի հարկի (արտակարգ հարկ՝ թիարանում աշխատելու փոխարեն) չափը մեծ վեզիրը բարձրացրել էր այն բանից հետո, երբ հայ արհեստավորները բողոքել էին դրա դեմ[65]։ Այս իրողությունները արտացոլում էին XVII դարի երկրորդ կեսից հարկերի ծանրանալու փաստը։ Արտակարգ հարկերը միտում ունեին վերածվելու տարեկան հարկերի, որոնք ծանրանում էին հարկատու բնակչության՝ հողագործների և էսնաֆի վրա։

Հայ էսնաֆի սոցիալական ու հասարակական հակասություններով պետք է բացատրել նաև պատրիարքական աթոռի շուրջ մղված հայտնի ընդհարումները, որոնք սուր բնույթ ստացան մեկ հարյուրամյակից ավելի՝ XVII—XVIII դդ.՝ արտացոլելով նաև կրոնական կենտրոնների (Էջմիածին—Սիս—Կ. Պոլիս—Երուսաղեմ) ներքին հակասությունները։

Կ. Պոլսում արհեստագործությունը մոտեցավ, բայց չկարողացավ հաղթահարել մանուֆակտուրային արտադրությունից այն կողմ տանող սահմանագիծը։ Նույնիսկ XVIII դարի երկրորդ կեսին գործում էին ընդամենը մի քանի մանուֆակտուրաներ (Սալոնիկ, Ադրիանուպոլիս, Բրուսա և այլն), որ վկայում է տեղական արտադրության սահմանափակության մասին։ Պետության թույլ փորձերը՝ աջակցելու Սալոնիկի չուխայի և Բրուսայի մետաքսի արտադրությանը, լուրջ նշանակություն չունեցան։ Ֆրանսիայից բարձրորակ դիպակի և այլ գործվածքների մեծաքանակ ներմուծման պայմաններում չծավալվեց նաև Կ. Պոլսի չուխայի արտադրությունը[66]։

XIX դարի երկրորդ կեսին եվրոպական տերությունների Թուրքիայի տնտեսական կախվածության ուժեղացման, եվրոպական արտադրանքի հետ տեղական արտադրության անհավասար մրցակցության պայմաններում շարունակվում էր վերջինիս անկման ընթացքը։ Իրավական բնագավառում այս իրողությունը պետք է արտահայտվեր թանզիմաթի ժամանակաշրջանի նոր օրենքներով, որ արդեն դրան համապատասխան՝ էսնաֆի տնտեսական կարողության հետ միասին, կազմում է ուսումնասիրության որակապես տարբեր բնագավառ։

СОСЛОВИЕ АРМЯН-РЕМЕСЛЕННИКОВ И ТОРГОВЦЕВ КОНСТАНТИНОПОЛЯ (XV—XVIII вв.)

Доктор истор. наук А. А. ХАРАТЯН

Резюме

Со времен завоевания Фатихом Мехмедом Константинополя армяне составляли существенную часть ремесленников и торговцев османской столицы. Армяне-ремесленники Константинополя объединялись в корпоративные организации *(эснаф)*, которые в некоторых случаях имели сугубо этно-конфессиональный (армянский), а в других—смешанный этно-конфессиональный (совместно с мусульманами) состав. В последнем случае различные религиозные единицы корпоративной организации сохраняли свои религиозные моральные принципы, лежавшие в основе деятельности *эснафа*. Налицо явление совместного проживания армян Константинополя земляче-

---

65 *Օրագրություն Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանի, էջ 227—228։*

66 İ. H. Uzuncarsılı. Osmanlı tarihi. IV. c., 2 kıs., s. 569—570.

скими группами и занятие последних одним и тем же ремеслом. Армянский *эснаф* Константинополя занимался более ста видами ремесел. Элиту *эснафа* составляли мастера-собственники—руководители корпоративных организаций. Через *кади* (верховный религиозный судья) турецкие власти регулировали торговлю и условия реализации на рынке ремесленных изделий. Во второй половине XVIII в. расширяется социальная роль *игитбаши* и, в частности, *кехья* среди *эснафа*, что в значительной мере связывается с процессом формирования армян-амираев как социального сословия. Во многих случаях *амираи* как господствующее сословие константинопольских армян выступали в качестве должностных лиц, представляющих роль главы *эснафа*.

THE ARMENIAN CRAFTSMEN AND MERCHANTS OF CONSTANTINOPLE (XV—XVIIIcc.)

Doctor of Hist. Sc. A. A. KHARATIAN

S u m m a r y

Since the times of the conquest of Constantinople by Fatih Mehmed the Armenians constituted the essential part of the Ottoman capital's craftsmen and merchants. The Armenian craftsmen of Constantinople were united in esnaf, which sometimes had particularly ethno-confessional (the Armenian), and in other cases—mixed ethno-confessional (together with Muslims) character. In the latter case, different religious units of the corporation preserved their religious-moral principles which lay in the basis of the esnaf. It was noticeable that the Armenians lived in the fellow-countrymen's communities in Constantinople which were occupied with the same craft. The Armenian esnaf of Constantinople was engaged in more than one hundred forms of crafts. The esnaf's elite was formed of the masters-owners-leaders of the corporations. The Turkish authorities regulated the trade and conditions of realization of craftware at the market through kadi (the supreme religious judge). In the second half of the eighteenth century the social role of the igitbashi and, particulary, kekhia in the esnaf was widened. To a great extent, it was connected with the formation of the social group of amira among the Armenians.